ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04
ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2026/25 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք.Արտաշատ**
**Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ** **«28» «ապրիլ» 2026թ.**
**ժամը՝ 10:00**

**Մասնակցում էին՝**
**Հանձնաժողովի նախագահ՝**
Բուժական գծով փոխտնօրեն Աղասի Մախտեսյան

**Անդամներ՝**
Հաշվապահ Հասմիկ Սահակյան

Դեղագործ Սոֆի Գևորգյան

**Հանձնաժողովի քարտուղար՝**
Մենեջեր ֆինանսական բնագավառում Հասմիկ Մկրտչյան

**ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2026/25 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2026/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հաստատեց նիստի հետևյալ օրակարգը՝
1. Տեղեկատվություն գնահատող հանձնաժողովի իրավազոր համարվելու մասին
2.Տեղեկատվություններ հայտերի շտկումների գնահատման վայրի , օրվա և ժամի մասին
3.Տեղեկատվություն գնման առարկայի մասին
4.Տեղեկատվություններ հայտերում առկա անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ
5.Հանձնաժողովի կայացրած որոշումները

*Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0*

## 1.ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱԶՈՐ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**1.1** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանձնաժողովը բաղկացած է չորս անդամից և հանձնաժողովի նիստին մասնակցում են հանձնաժողովի բոլոր անդամները ,հետևաբար ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն , հանձնաժողովի նիստը համարել իրավազոր և հայտարարել բացված:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0*

## 2. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅՏԵՐԻ ՇՏԿՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՅՐԻ ,ՕՐՎԱ ԵՎ ԺԱՄԻ ՄԱՍԻՆ

**2.1** Գնման ընթացակարգի հայտերի շտկումները գնահատվել են ք. Արտաշատ Ա.Խաչատրյան 116 հասցեում արձանագրություն 3-ով սահմանված օրը և ժամին՝ 28.04.2026թ. 10:00:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0*

## 3. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՄԱՍԻՆ

**3.1** Գնման առարկա է հանդիսանում էնդովիրաբուժական գործիքների ձեռքբերում :

*Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0*

## *4. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅՏԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՏԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

**4.1** ԱՐՇԻՆ 91 ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն սահմանված ժամկետում /մեկ աշխատանքային օր/ չի շտկել անհամապատասխանությունները , մասնավորապես՝ ԱՐՇԻՆ 91 ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1-ում բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը , հավելված 1.3 չի ներկայացվել , ապրանքի ամբողջական նկարագրում `ֆիրմային անվանում, ապրանքային նշանը, մակնիշը , արտադրող կազմակերպության անվանումը և տեխնիկական բնութագիրը սխալ է լրացված:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0*

## 5.ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ ԿԱՅԱՑՐԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հանձնաժողովը որոշեց

1.Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 42-րդ կետի առաջին պարբերությունով , հրավերի 8.11 կետի 2-րդ պարբերությամբ , հիմք ընդունելով ԱՐՇԻՆ 91 ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի չշտկված հայտը՝ ԱՐՇԻՆ 91 ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի հայտը գնահատել հրավերի պահանջներին անբավարար և մերժել :

2.Ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետով , հիմք ընդունելով հրավերի 1-ին մասի 11.1 կետի 4-րդ ենթակետը` 1 չափաբաժինը հայտարարել չկայացած` պայմանագիր չի կնքվում հիմքով :

3. Ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով հրավերի 1-ին մասի 8.25 կետը ` անգործության ժամկետ սահմանել սույն ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը հրապարակելուց հետո 10 օրացուցային օր:

4. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 42-րդ կետը , Գնումներ մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ ենթակետով , հիմք ընդունելով մասնակցի` ԱՐՇԻՆ 91 ԳՐՈՒՊ ՍՊԸ—ի չշտկված հայտը ` մասնակիցը խախտել է գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները , որը հանգեցրել է գնման ընթացակարգին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը ,որի հետևանքով օրենքով սահմանված կարգով դիմել լիազոր մարմին ` մասնակցին ընդգրկելու գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

*Ընդունվել է որոշում` կողմ-3, դեմ-0*

**Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը**

| | | |
|---|---|---|
| **Նախագահ`** | Ա. Մախտեսյան | |
| **Անդամներ`** | Հ. Սահակյան | |
| | Ս. Գևորգյան | |
| **Քարտուղար`** | Հ. Մկրտչյան | |